## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ.
(0322)6-06-24 , darpas.lori@mta.gov.am

N 209
*28 հունիս 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 39-ից 42 որոշումները:
Առդիր՝ 1 ֆայլ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Արմեն Ալոյան**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Դ. Վարդանյան*
*0322 60624*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 39

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-028-004 ծածկագրի 0.116 հա տնամերձ հողամասին տրամադրել 2 փող., 1 փկղ, 1 փոստային հասցեն:
2.Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 40

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0051-0025 ծածկագրի 0.0831 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 5 փող., 1 նրբ, 1 փկղ, 6 փոստային հասցեն:
2.Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *07300634*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 41

### ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 1-ի «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «կիրարկումն ապահովող միջոցառումների մասին » N 1192 որոշման 1-ին կետի «ա» ենթակետին համապատասխան, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետով և 40-րդ հոդվածով՝ Որոշում եմ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի զորահավաքային մարմնի օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

Հաստատված է
ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ղեկավարի
2019 թվականի հունիսի 20-ի N 41 որոշմամբ

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

### 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Զորահավաքային մարմնի օրինակելի կանոնադրության (այսուհետև՝ կանոնադրություն) նպատակն է սահմանել այդ մարմնի իրավունքներն ու պարտականությունները, ենթակայությունը, խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

1. Զորահավաքային մարմինն ստեղծվում է տեղական ինքնակառավարման մարմնում ու զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում: Համայնքային մարմնում զորահավաքային մարմնի իրավասություններն իրականացվում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները:
2. Զորահավաքային մարմնը իրենց աշխատանքի ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ու անմիջական ղեկավարի որոշումներով, որի վրա անհատական պատասխանատվություն է դրված զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կազմակերպման և իրականացման համար:

### 2.ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3. Զորահավաքային մարմնի հիմնական խնդիրն է խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:
4. Զորահավաքային նախապատրաստության խնդրին համապատասխան՝

**ա)** տեղական ինքնակառավարման մարմնում և զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում ստեղծվող զորահավաքային մարմինը զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում է՝

- սահմանված զորահավաքային առաջադրանքի կատարումն ապահովող զորահավաքային պլանի մշակման աշխատանքի կազմակերպումը,
- զորահավաքային պլանի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը և իրականացումը,
- զորահավաքային նախապատրաստության մասով պաշտպանական պատվերի (առաջադրանքի), ինչպես նաև համապատասխան պայմանագրերի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը,
- սահմանված կարգով կազմակերպության ղեկավար անձնակազմի, մասնագետների և որակյալ բանվորների ամրագրման աշխատանքների իրականացումը,
- զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը,
- զորահավաքային նախապատրաստության ոլորտին առնչվող այլ աշխատանքներ:

5. Զորահավաքային մարմինը իրավունք ունի՝
ա) առաջարկություններ ներկայացնելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ,
բ) իրենց իրավասության սահմաններում խորհրդակցություններ հրավիրելու,
գ) իրենց իրավասության սահմաններում համակարգելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները:

## 3. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Զորահավաքային մարմնի կառուցվածքը և կազմը որոշում է՝ ելնելով զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնույթից և ծավալից:
7. Զորահավաքային մարմնի ղեկավարը ենթարկվում է պետական մարմնի աշխատակազմի, համայնքի և կազմակերպության ղեկավարներին:
8. Զորահավաքային մարմնի գաղտնի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 42

## ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ06-033-0032-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՌԻՓՍԻՄԵ ԱՇՈՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հռիփսիմե Աշոտի Սահակյանի լիազորված անձ Սամվել Շալիկոյի Գևորգյանի դիմումը, <<Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 2-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 49 հասցեում փաստացի առկա է բնակելի տան կառուցման և սպասարկման համար սահմանազատված 0.05754 հա մակերեսով հողամաս, դրա վրա առկա է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության 49.71 քմ շինություն, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, նշված անշարժ գույքի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և հողհատկացման հիմքերը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝

Որոշում եմ.

1. Ճանաչել Հռիփսիմե Աշոտի Սահակյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի 06-033-0032-0006 ծածկագրում գտնվող 0.05754 հա հողամասի և նույն հողամասի վրա գտնվող 49.71 քմ բնակելի շինության նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Դարպաս համայնք 2 -րդ փող, 4-րդ նրբ, 49:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ